2023թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2023թ. ընթացքում ՀՀ ՔՏՀԱ տեսչական մարմինը հանրությունից ստացել է **829** բողոք: Ընդհանուր **829** բողոքից **251**-ը ստացվել է թեժ գծով: Դրանցից **117**-ը վերաբերել է քաղաքաշինության, **43**-ը՝ տեխնիկական ու հրդեհային անվտանգության, **80**-ը՝ տրանսպորտային անվտանգության, **11**-ը՝ էներգետիկայի և էներգասպառման բնագավառին: Մնացած **578**-ը ստացվել է էլեկտրոնային և/կամ առձեռն դիմում բողոքներ ներկայացնելու միջոցով:

Ընդհանուր **829** դիմուում-բողոքից **542**-ը վերաբերել է քաղաքաշինության, **134**-ը՝ տրասնպորտային անվտանգության, **76**-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, **68**-ը՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, **9**-ը՝ գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառին:

Ստացված բողոքների ավելի քան 65 տոկոսը՝ **484**-ը բաժին է ընկնում Երևանին, մնացած **345**-ը՝ մարզերին:

Երևանի **484** բողոքներից **381**-ը վերաբերել է քաղաքաշինության, **52**-ը՝ տեխնիկական և հրդեհային անվտանգության, **31**-ը՝ էներգետիկայի և էներգասպառման, **18**-ը՝տրանսպորտային անվտանգության, **2**-ը՝ գեոդեզիայի և հողօգտագործման բնագավառին: